ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Բարձրագույն դատական խորհրդում ստացվել է Սնանկության դատարանի նախագահի գրությունը, որով վերջինս խնդրել է միջոցներ ձեռնարկել Սնանկության դատարանում դատավորների թվի օբյեկտիվորեն առաջացած անբավարարության հետևանքով դատարանի բնականոն գործունեությունն ապահովելու ուղղությամբ:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 56-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *այն դեպքում, երբ որևէ դատարանի բնականոն գործունեությունը չի կարող ապահովվել դատավորների թվի օբյեկտիվորեն առաջացած անբավարարության հետևանքով, Բարձրագույն դատական խորհրդի որոշմամբ նույն ատյանի համապատասխան մասնագիտացման մեկ այլ դատավոր իր համաձայնությամբ կարող է մինչև մեկ տարի ժամկետով գործուղվել առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան: (...):*

Բարձրագույն դատական խորհրդի 2020 թվականի հոկտեմբերի 22-ի թիվ ԲԴԽ-68-Ն-15 որոշման 154-րդ կետի համաձայն՝ *մինչև հարցի քննարկումը Խորհրդին ներկայացնելը Դեպարտամենտի կենտրոնական մարմինը աշխատակազմերի, ինչպես նաև դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքում տեղադրելու միջոցով տեղեկացնում է դատավորներին գործուղման հնարավորության մասին:*

Ելնելով վերոգրյալից՝ **ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների քաղաքացիական մասնագիտացման դատավորներին տեղեկացվում է Սնանկության դատարան (նստավայրերը՝ քաղաքներ Գյումրի, Ստեփանավան) գործուղվելու հնարավորության մասին:**

Սնանկության դատարան գործուղվելու ցանկություն ունեցող քաղաքացիական մասնագիտացման դատավորները կարող են մինչև **2022 թվականի հունվարի 31-ը, ժամը՝ 11:00-ն,** գործուղվելու առնչությամբ իրենց գրավոր համաձայնությունը ներկայացնել Բարձրագույն դատական խորհուրդ (էլ. փոստ՝ info@court.am):

Դատական դեպարտամենտի
Իրավական ակտերի մշակման և փորձաքննության վարչության
ԲԴԽ նիստերի նախապատրաստման և որոշումների նախագծերի մշակման բաժին

հեռ.՝ 010-511-825